ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Փետրվարի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Էստոնական ՍՍՌ-ի վաստակավոր արտիստ Խուգո Լեպնուրմը (երգեհոնահար) և Տալլինի կոնսերվատորիայի դոցենտ Ժաննի Սիմոնը (երգչուհի՝ մեցցո-սոպրանո)։ Հյուրերը եղան Մայր Տաճարում, վեհարանում, ծանոթացան Մայր Աթոռի թանգարանի հետ։

Հյուրերին ցույց տրվեց ջերմ ընդունելություն։

***

Փետրվարի 5-ին, շաբաթ, «Սրբոցն Սարգսի զօրավարին և որդւոյ նորին Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն» տոնի օրը, գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում սարկավագ ձեռնադրեց Կիրովաբադ քաղաքի ընծայացու Կարապետ Հաղարյանին։ Հաջորդ օրը, կիրակի, սրբազանը Կարապետ սարկավագին ձեռնադրեց քահանա։

***

Փետրվարի 17-ին, «Սրբոց Վարդանանց զօրավարաց 1036 վկայից» տոնի օրը, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի ավուր պատշաճի քարոզից հետո կատարվեց հոգեհանդիստ։

***

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Զինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի էներգետիկների պատգամավորությունը, որին գլխավորում էր ՉԺՌ-ի վառելանյութերի արդյունաբերության մինիստրի տեղակալ Լյու Լան-բոն։ Պատգամավորության կազմի մեջ մտնում են 12 հոգի, դրանց թվում՝ գլխավոր հիդրոէներգոշինի պետ Լի Ժուն, Արևելյան Զինաստանի հիդրոշինի վարչության պետ Վան Սինը, Հյուսիս Արևելքի հիդրոշինի վարչության պետի տեղակալ Շեն Սին-այանը, նախագծային ինստիտուտի պետի տեղակալ Վան Լու-նանը և ուրիշներ։ Պատգամավորությանը Երևանից ուղեկցում էր Արտասահմանի հետ կուլտուրական կապի ընկերության աշխատակից Դ. Մովսիսյանը։ Պատգամավորությանը վանքի բակում դիմավորեցին գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը և հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։

Հյուրերը Մայր Տաճարի ավագ լուսարարի առաջնորդությամբ եղան Տաճարի ներսում, ուր նրանց մանրամասն բացատրություններ տրվեցին Տաճարի շինության, ժամանակի, վերանորոգության և մանրանկարչության վերաբերյալ։ Հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր տեսան թանկարժեք սպասներ ու զգեստներ։

Մեկնելիս, հյուրերը փրենց շնորհակալությունները հայտնեցին սրբազան հոր և միաբանությանը՝ իրենց ցույց տրված ուշադիր վերաբերմունքի համար։

***

Փետրվարի 22-ին, Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի հանձնարարությամբ, գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը կիսասարկավագության աստիճան շնորհեց Թբիլիսիի էջմիածնեցիներից Ս. Գևորգ եկեղեցու դպիր Ռուբեն Իլիասյանին։

***

Փետրվարի 23-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, որը գտնվում էր Ս. Էջմիածնում՝ մասնակցելու Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին, մեկնեց իր պաշտոնավայրը՝ Ռումինիա։